

- 19 Այսպէս եւ Սարգիս եւ ծանօթքն ողջոյն
Ըզկամն Չաւուշին ուժիւ արծաթոյն,
Հաճէին թողուլ սողիլ իբր յայն բոյն
Ըզծանօթ անձինս առ խօսիլ ընդ նոյն:
- 20 Արդ կացեալ նոցա անդր իբր ամիս մի
Առ Կիպրոս նաւօղ ոչ դիպեալ նաւի
Նաւեն առ Քիոս որ եւ Հոն Կըղզի
Եւ որ ըստ Տաճկաց Սազըզ Ատասի:
- 21 Ուր օթեւանեալ ի յարկի միոջ
Միշտ բանտիւր Սարգիս յանձուկ ինչ տեղւոջ
Որ չելով Հայոց ի նըմին կըղզւոջ
Կեայր անմըխիթար իբրեւ յամայւոջ:
- 22 Յուսային նոքա անդ ունիլ ըզնաւ
Իսկ ի դերեւս ել յոյսն այն որ սակաւ,
Զի զոր յԸզմիւռնեա ոչ գըտին բնաւ
Զի՞ հնար էր նոցա ունել անդ դիւրաւ:
- 23 Սակայն ի վերայ այսր ամենայնի
Յետ բազում աւուրց անդ յանկարծակի
Պատահիւր նաւ ինչ առ Կիպրոս կըղզի,
Որով ջանային փոյթ չըւել անտի:
- 24 Որք ընդ նաւուղղին արկեալ սակ եւ գիր
Առ նաւել յայգուէ եղեալ ժամագիր,
Բայց ի գիշերի հողմով յաջող տիր
Նաւն առաքաստիւր սակն հաշուեալ նանիր:
- 25 Զարթուցեալ նոցա շոյտ յառաւօտու,
Ոչ ըզնաւակալն որ էր սակարկու,
Եւ ոչ զստուերն իսկ գիտեալ նոյն նաւու՝
Մընային անդէն որպէս առաջու: